ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԿՌՋԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

DOI: 10.54503/2738-277X.2026.1(23)-5

Խաչատրյան Հասմիկ
բանասիրական գիտությունների թեկնածու,
ԿԳՄՄՆ «Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ,
գիտաշխատող. Hasmikkhach1960@gmail.com

Բանալի բառեր. Ղարաբաղ-Շամախիի միջբարբառ, հնչյունափոխություն, բնիկ հայերեն բառ, փոխառություն, բառիմաստային ճյուղավորում, գրաբար:

Ներածություն

Պատմական Հյուսիսային Արցախի Կռզեն գյուղը գտնվում է Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանում: Նախկինում եղել է հայաբնակ մեծ գյուղ: Ըստ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի՝ 1998 թ. հայոց հինավուրց Կռզենը արդեն թրքաբնակ էր և անվանափոխվել էր՝ դառնալով Գյունաշլի[1]:

Մինչև 1883 թ. Կռզենը «…. Ճիշտ գետի ափին էր, մի խոնաւ տեղում…», բայց հետո բնակիչները նոր գյուղ են հիմնել նախկինից «չորս վերստ հեռաւորութեամբ վեր մի բարձր տեղ»[2]:

Կռզենի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ գրեթե հայտնի չեն: Գյուղի պատմության ամբողջական ուսումնասի-

---

* Ներկայացվել է 01.07.2026, գրախոսվել՝ 01.08.2026:

[1] **Ս. Կարապետյան**, *Հյուսիսային Արցախ*, Ե., 2004, էջ 286:

[2] *Նոր-Դար*, 1886, հ. 119, էջ 2:

րության առումով առանձնակի կարևորություն և արժեք ունեն հանգստարանում պահպանված տապանաքարերը: Կոզեն գյուղի տարածքում պահպանվել են հին գյուղատեղիի, հանգստարանի և հիմնովին ավերված եկեղեցու մնացորդներ[3]:

20-րդ դարավերջի բռնագաղթի օրերին՝ 1988 թ., կոզենցիները թողել են հայրենի բնօրրանը. նրանց մի մասը վերաբնակեցվել է Հայաստանում, հիմնականում (40-45 ընտանիք)՝ Մասիսի Սիս գյուղում, մի մասն էլ մեկնել է Ռուսաստան՝ Սոչի-Ադլեր (10-15 ընտանիք), Սարատով (8-9 ընտանիք), Օմսկ (10 ընտանիք) և այլ քաղաքներ:

Անդրադառնալով Կոզենի բարբառին՝ արձանագրել ենք, որ կարծիք է եղել, ըստ որի՝ կոզենցիները «հայադավան ու հայախոս ուտիացոց մնացորդներ են»[4]: Կարևոր ենք համարում ներկայացնել Սարգիս Քամալյանի դիտարկումը Կոզենի բարբառի վերաբերյալ. «Այնտեղ եղած տապանաքարերի վրայի գրվածքները հայատառ են, հայ բառերով հին թէ նոր հանգստարաններում: Ողջ ու առողջ կոզենցիք էլ խոսում են հայերէն իրանց յատուկ բարբառով, որի արտասանութիւնը բաւական սոպո ու կոպիտ է, բայց մեջը ուտիերենի ոչ մի նշան չկա: Կոզենցիք խոսում են շատ արագ, անսովոր ականջի համար խորթ ու անհասկանալի է թվում նրանց խոսվածքը, ինչպես անհասկանալի են թվում մեզ զոկերի, զեյթունցիների, սասունցիների արագ խոսվածքը լսելիս…. Չգիտեմ, նախկին կըոզենցիք մի քանի հարիւր տարի առաջ ուտիերեն խոսեցել են թե չէ, բայց ներկա կոզենցոց զրույցի, խոսակցութեան մեջ ոչ մի հետք չկայ

[3] **Մ. Բարխուտարեանց.,** *Արցախ, Բագու*, 1895, էջ 59:

[4] Տե՛ս **Հ. Խաչատրյան**, *Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ.-Ջահուկյանական ընթերցումներ*, 1(22), Ե., 2025, էջ 14:

ուտիերենի»[5]: Եվ հեղինակը, որ ուսուցիչ է եղել ուտիների Նիժ ավանում, բերում է լեզվական որոշ նմուշներ՝ Կոզենի բարբառը համեմատելով ուտիերենի հետ. «Կոզենցիք համբարքն անում են զուտ հայերեն, միայն չորսի փոխարեն ասում են չորք, եօթի տեղ օխտ, իսկ նիժեցին 1-10 համարում է այսպես՝ սա, պա, խիբ, խո, ուղկ, վուղ, մուղկ, վույ, վիծ, 20-ին ասում է ղա, 30-ին սաղա վիծ, 40-ին պաղա կամ պաղօ, 50-ին պաղավիծ, 60-ին խիբղօ, 70-ին խիբղավիծ, 100-ին բաճ»[6]:

Չնայած այն հանգամանքին, որ կոզենցիները փոքր համայնքով ապրում են Մասիսի շրջանի Սիս գյուղում, և մեծահասակները դեռ խոսում են մայրենի խոսվածքով, սակայն բարբառը կորստյան վտանգի առջև է կանգնած, որովհետև երիտասարդ սերնդի և երեխաների խոսքում այն նահանջում է:

Այսօր հույժ կարևոր է հայրենի բնօրրանից կտրված Կոզենի բարբառին անդրադառնալը: Աշխարհաքաղաքական ոչ նպաստավոր պայմաններ են ստեղծվել, և արևմտյան շատ բարբառների նման (Սեբաստիա, Տիգրանակերտ, Երզնկա, Խարբերդ և այլն) վըտանգված է նաև Հյուսիսային Արցախի այս բարբառի ճակատագիրը:

Բառաքննություն

Հայտնի է՝ լեզուն նախ և առաջ դրսևորվում և զարգանում է բանավոր եղանակով, իսկ գրավոր խոսքը ձևավորվում է հետագայում՝ մշակվելով ու կանոնակարգվելով և հիմք դառնալով գրական լեզվի կազմավորման:

---

[5] *Ե., Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան,* **Ս. Քամալյանի** ֆ., ց. 2. բ. 6-րդ, գ 62, թ. 13-14:

[6] Տե՛ս նույն տեղում:

Բարբառագետ Ա. Գրիգորյանը, անդրադառնալով բարբառային հայերենի բառապաշարին, նկատել է, որ բարբառների բառապաշարը ձևավորվել է երկարատև դարերի ընթացքում, որի հետևանքով էլ նրա մեջ այժմ էլ կարելի է մատնացույց անել բառապաշարի առանձին շերտեր, որոնք տարբեր դարաշրջանների արդյունք են[7]:

Սույն հոդվածում մեր նպատակն է շարունակել ներկայացնել Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի Կրզենի բառապաշարի մի շարք հետաքրքրական առանձնահատկություններ՝ դիտարկելով ըստ պատմական շերտերի, բառակազմական և իմաստաբանական իրողությունների:

Բարբառային յուրահատուկ ձևեր

Ծիծիկ մատ: Կոզենի բարբառի ուշագրավ բառանուններից է *ճկոյթ* հասկացության *ծիծիկ մատ* բառանունը (օրինակ՝ *Ծըծիկ մատըս* յէրնած ըի (Ճկույթս արյունոտվել է), Անք պըճուր մատը *ծըծիկ մատըն* ըի (Ամենափոքր մատը ճկույթ մատն է)):

Դեռևս հին մատենագրության մեջ վկայվում է *ճկոյթ* բառը, որի «հնագույն և ընտիր ձևը», ըստ Հ. Աճառյանի, *ծկոյթ*-ն է, կա նաև *«ծկիկ մատն»* տարբերակով. այն փոխառություն է հարավկովկասյան լեզուներից. հմմտ. լազ. *ծո՛ւլա քի՛թի* «ճկոյթ» (այսինքն՝ փոքր մատ), որը կազմված է *ծուլու* «փոքրիկ» և *քիթի* «մատ» բառերից[8]: Նրա կարծիքով՝ հայերենի *ծկոյթ*-ը «անցած է նախաւոր **ծուլկոյթ> *ծլկոյթ* ձևերից»: Հայերենի որոշ բարբառներում ևս պահպանված է *լ*-ով տարբերակը (Ագուլիս՝ *ծլագ բիւթ*, Շամախի՝ *ծրկլամատ*)[9]: *Ծկոյթ* և *ճկոյթ* տարբերակներում *ծ*-ի փոխարեն *ճ*-ի առկայությունը

[7] **Ա. Գրիգորյան**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 187-203:

[8] **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Գ, Ե., 1977, էջ 205-206:

[9] **Հ. Աճառեան**, *Քննութիւն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 373, **Ռ. Բաղրամյան**, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 212:

մեկնաբանվում է կովկասյան լեզուների հնչյունափոխական օրենքներով, ըստ որոնց՝ *ծ, ձ, ց>ճ, ջ, չ* «կանոնավորապես փոխանակում են իրար վրացի և լազ լեզուների մեջ»[10]: Հ. Աճառյանը արձանագրում է նաև, որ Ագուլիսի *ծլագ բիւթ* և Շամախիի՝ *ծրկլամատ* բառերում կովկասյան *ծո՛ւլու քի՛թի* ձևից փոխառյալ է միայն *ծուլու*-ն (*ծլիկ, ծկլա* ձևով), իսկ երկրորդ բաղադրիչը պարզապես թարգմանված է հայերեն բառերով (մի դեպքում՝ *մատ* բառով, մյուս դեպքում՝ *բութ*)[11]:

Բարբառային հայերենում բազմաթիվ հնչատարբերակներով է դրսևորված այս բառը: Մեր ուշադրությունը, սակայն, գրավել են Գանձակի՝ *ծծինք*, Ղարաբաղի *ծծիկն* բառերը (ի դեպ, Ղարաբաղի բարբառում *ծրծիկըն* բառը քմայնացմամբ դարձել է *ծրծիկըն,* որից էլ այնուհետև *կ*-ի անկմամբ ձևավորվել է *ծրծիյնը* բառը[12]), որոնք իրենց հնչյունական տարբերակներով աղերսներ ունեն Կոզենի բարբառի *ծիծիկ մատ*-ի հետ: *Ճկույթ*-ի բարբառային այս տարբերակները համադրելով և համեմատելով՝ հակված ենք կարծելու, որ Կոզենի բարբառի *ծիծիկ մատ*-ը ծագումնաբանորեն առնչակից է *ճկույթ* կովկասյան փոխառությանը:

Կրոճիագի: Բարբառային հայերենը հարուստ է նկարագրական կազմություններով, որոնցից Ղարաբաղի և Կոզենի բարբառներում արձանագրված է *կրոճիագի* ինքնատիպ բառը՝ *«կարիճ»* իմաստով. օրինակ՝ Հընա՛ վախտըէրը տընէրըմը շատ կըէր *կրոճիաց* (Հին ժամանակներում տներում շատ կարիճ կար):

Հարկ է փաստել, որ և՛ ՀԱԲ-ում, և՛ «Միջին հայերենի բառարանում» վկայված է *կոր*-ը՝ որպես «կարիճ» հասկացության բառանուն: Միջին հայերենից վկայված է հետևյալ օրինակը. «Թէ ի տունն

[10] ՀԱԲ, հ. Գ, էջ 204-205:

[11] Նույն տեղում:

[12] **Ա. Յ. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 353:

ծխէս՝ *կորն* որ ի տունն լինի, ջարդի»[13]: Ըստ Հ. Աճառյանի՝ այն ծագումնաբանորեն առնչակից է հայերեն *կոր* «ծուռ» բառին, և «…. այսպէս է կոչուած այս միջատը թաբուով՝ խուսափելով տալ բուն անունը»[14]: Այսինքն՝ փոխաբերացմամբ *կոր*-ը գործածվել է որպես «կարիճ» հասկացության նշանակելի: Եվ բարբառներում գործածվող *կրոռիաձի* բառը դրա վառ ապացույցն է: Ինչպես նկատելի է, այն կազմված է *կեռ* և *ագի* արմատներից, այսինքն՝ կեռ՝ ծուռ պոչ ունեցող միջատ: Նմանատիպ կաղապար առկա է նաև պարսկերենում. každum՝ կազմված՝ kaz՝ *ծուռ* և dum՝ *պոչ* բառերից[15]: Գ. Ջահուկյանը *կոր* և *կեռ* բառերը համարում է բնիկ հնդեվրոպական՝ ձևավորված *gor-՝ ger «պտտել, ոլորել» արմատից[16]: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ *կրոռիագի*-ն բնիկ հայերեն է:

Պահրէզ: Բարբառում գործածվող յուրահատուկ բառերից է *փահրիզ*-ը: Այն վկայվում է դեռևս 14-րդ դարի հայ մատենագրության մեջ. մեկ անգամ գործածում է Զաքարիա Ծործորեցին, այնուհետև՝ Գրիգոր Տաթևացին[17]. գործածվել է «պահք, պաս, ծոմապահություն» նշանակությամբ: Ըստ Հ. Աճառյանի՝ պարսկերենից փոխառյալ է՝ pahrēz՝ «զգուշություն ի կերակրոց, ժուժկալություն, ծոմ» նշանակությամբ[18]: Այն վկայված չէ բարբառային որևէ բառարանում: Միայն Ռ. Բաղրամյանն է արձանագրել հիշյալ բառը Կոզենի բարբառի բառացանկում[19]: Հարկ է փաստել, որ մեր բարբառախոսներն էլ են այն վկայել բարբառում՝ որպես սնունդ ընդունելու հա-

[13] **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 383:
[14] ՀԱԲ, հ. Բ, էջ 643-644:
[15] Նույն տեղում:
[16] **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՍԲ), Ե., 2010, էջ 400, 422:
[17] ՀԱԲ, հ. Դ, էջ 12:
[18] Նույն տեղում:
[19] **Ռ. Բաղրամյան**, *Կոզենի բարբառը*, Ե., 1961, էջ 218:

տուկ ռեժիմ, այսինքն՝ «սննդակարգ» հասկացության նշանակելի, որն իր իմաստով մասամբ համապատասխանում է հինհայերենյան նշանակությանը. օրինակ՝ Գյաւրաւգ *փահրիզ* պահէս, վըէր չիւշտ լաւվանաս (Պետք է սննդակարգ պահես, որ շուտ լավանաս):

Մեջքի սրռակ: Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքներում արձանագրված է «ողնաշար» հասկացության *սէռ (սրէռ)* բառանունը: Ե՛վ Հ. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը *սեռն*-ը հիշատակում են՝ արձանագրելով դրա «առանցք, անիվի առանցք» նշանակությունները և համարելով փոխառություն սեմական աղբյուրից՝ sarnā[20]: Լ. Հովհաննիսյանը, սակայն, անդրադառնալով Ղարաբաղում գործածվող նշված բառին, այն համարում է բառային հնաբանություն[21]: Ըստ նրա՝ Արցախում բառն ունի «լեռան գագաթնային գիծ և ողնաշարի երկայնական ցցուն գիծը» նշանակությունները: Մեր կարծիքով՝ Ղարաբաղի բարբառում գործածվող *սէռնը*՝ «ողնաշար» նշանակությամբ, փոխաբերացմամբ առաջացած բառ է. դրա՝ «առանցք» իմաստից ձևավորվել է «ողնաշարի երկայնական ցցուն գիծ»-ը, այսինքն՝ «մարմնի առանցք» նշանակությունը: Հարկ է փաստել, որ Կոզենում և Ղարաբաղ-Շամախիի որոշ խոսվածքներում բառն առկա է ոչ միայն *սէռ* ձևով (Գորիսի Շինուհայր գ., Մարտակերտի Մեծ Շեն գ.), այլև *մեջք* բառի հարադրությամբ՝ *մէջքի սրռակ* (Կոզեն), *մէշկի սրռկուց* (Դաշքեսանի Բանանց գ.), *մաշկէն սէռը* (Սարդու), *մէշկի սրռուկ* (Քարհատի Չովդար գ.), *մէշկի սէռը* (Գորիս) նկարագրական կազմություններով. օրինակ՝ Կոզենում՝ *Մըչքիս սրռակը* էն հաւջա պօկ ի գյ ö լի (Ողնաշարս քիչ է մնում պոկվի):

[20] ՀԱԲ, հ. Դ, էջ 203: ՀՍԲ, էջ 676:

[21] **Լ. Հովհաննիսյան**, *Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները*, Ե., 2024, էջ 17:

Իմաստափոխված բառեր

Ինչպես նկատել է Է. Աղայանը, բառերի իմաստները ժամանակի ընթացքում կարող են փոխվել, և հաճախ բառի հին իմաստը մոռացվում, անհետանում է, և այն ստանում է նոր իմաստ: Ըստ Է. Աղայանի՝ «Նոր հատկանիշների հայտնաբերումը, հետևաբար հենց տվյալ առարկայի ճանաչման զարգացումը հանգեցնում է բառի նախնական իմաստի՝ բնիմաստի մթագնմանը, որով և բառն ստանում է մի նոր, ավելի ընդհանուր իմաստ»[22]:

Բնիմաստի մթագնման հետևանքով իմաստափոխության ուշագրավ օրինակներ են արձանագրվում Կոզենի բարբառում:

Ձուկ իմաստով բարբառում գործածվում է *տապ[ը]իկ* բառը: Ինչպես հայտնի է, *տապակ*-ը «մեջը բան խորովելու կամ տապակելու աման»-ն է, այն իրանական լեզուներում գործածված է tāpak, tāba, tāva տարբերակներով: Ծագում է tap, tāp «տաքացնել» արմատից, որից անցել է ասորերենին, արաբերենին և թուրքերենին[23]: Ըստ Հ. Աճառյանի՝ վրացերենում գործածվող *տապակի (տափակի), տապակ և տաբակա*՝ «տապակած միս կամ ձուկ» իմաստով բառերը հնարավոր է՝ հայերենից փոխառված լինեն: Հարկ է փաստել, որ «Հայոց լեզվի բարբառային բառարանում» ևս վկայված է *տապակա* բառը, որը Արարատյան բարբառում գործածվում է որպես «տապակած ձուկ» հասկացության նշանակելի[24]:

Ներկայացված օրինակները կարևոր փաստեր են այն բանի, որ *տապիկ* բառը «ձուկ տապակելու թավա» իմաստից փոխաբերացմամբ դարձել է *ձուկ* հասկացության նշանակելի, որը գործածվում է Կոզենի բարբառում ոչ թե «տապակած ձուկ», այլ ընդհանրապես «կենդանի ձուկ» իմաստով. օրինակ՝ Մէր շընըմը շատ

[22] **Է. Աղայան**, *Լեզվաբանության ներածություն*, Ե., 1967, էջ 266, 269:
[23] ՀԱԲ, հ. Դ, էջ 372-373:
[24] *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հ. Զ, Ե., 2010, էջ 135:

տապրկա գյօլէր կա (Մեր գյուղում ձկան լճեր շատ կան), Մէր գէտըմը լիգը *տապ*ը*իկ* կըէր (Մեր գետում լիքը ձուկ կար):

Մէծըիկ: Իրականության յուրահատուկ ընկալման բառային դրսևորումներ են Կոզենի բարբառի ազգակցական հարաբերություններ արտահայտող մի շարք բառեր: Այսպես՝ *տատ* հասկացությունը այս բարբառում առկա է *մէծըիկ* բառանվամբ, որը, ինչպես տեսնում ենք, *մեծ* արմատի և *-իկ* ածանցի համադրությամբ կազմություն է: Ինչպես գիտենք, բարբառային հայերենում *մեծ* բառի հոմանիշ է *ջոջ*-ը: Որոշ բարբառներում *մեծ մամ*-ը դրսևորվել է *ջոջ մամ, ջոջ աղէ* բառակապակցություններով: Եվ, ինչպես *ջոջ* բառը վերոհիշյալ կապակցային ձևերից ընդամենը մեկ աստիճանով առաջ է մղվել և բառիմաստային բևեռացումով փոխանվանաբար ձևավորվել է *ջօճօ*-ն (նաև *-իկ* ածանցով՝ *ջօճիկ*), նույն տրամաբանությամբ էլ Կոզենի բարբառում կազմվել է *մէծ*ը*իկ* բառը՝ «տատ» իմաստով. օրինակ՝ *Մէծ*ը*իկըս* հԅրիր տարէկան ը֊ի (Տատս հարյուր տարեկան է): Հարկ է փաստել, որ բարբառում *տատ*-ը ևս առկա է, սակայն այն փոխաբերացմամբ գործածվում է որպես «հորաքույր» հասկացության նշանակելի[25]. օրինակ՝ *Մէծըիկըս* հու *տատըս* ըրԅ֊ր հետ գնացին աղինջ քաղըէլ (Տատս ու հորաքույրս իրար հետ գնացին եղինջ քաղելու):

Հաւսիկ: Բարբառային հայերենում որպես «քեռակին» հասկացության նշանակելի դրսևորված է *հաւսիկ* բառանունը: Ինչպես հայտնի է, Հ. Ասմանգուլյանը *ազի*-ն համարում է ազգակցական արխաիկ բառ: Ըստ նրա՝ Ղարաբաղի բարբառում առկա *հասի* (հորաքույր նշանակությամբ) բառը հնդեվրոպական արմատական ձև է, և hasi-ն ուրիշ ազգակցական տերմինների նման պետք է կազմված լինի has+i բաղադրիչներից: Has ձևույթի մեջ նա տեսնում է

[25] Տե՛ս Լեզվի ինստիտուտի արխիվ, «472. Կոզեն» տետրում:

հնդեվրոպական արմատներից մեկը, որ նշանակում է «ծնել», և եզրակացնում է, որ այս արմատի սկզբնական նշանակությունը թերևս կարելի է վերականգնել իբրև «ծնող, մայր»[26]:

Չնայած հին գրական հայերենում բառը արտացոլված չէ, սակայն ավանդված է բարբառային հայերենում նախ՝ *«մայր»* իմաստով, ապա՝ արդեն բառիմաստի տեղաշարժով ձևավորված «հորաքույր» (*հասի*՝ Ղարաբաղ), «հորեղբոր կին» (*ազի*՝ Եղեգաձոր) իմաստներով[27], իսկ արդեն Կոզենի բարբառում, ինչպես նշեցինք, «քեռակին» նշանակությամբ. օրինակ՝ Քէռիկս հու *հաւսիկըս* յէկին մէր տուն (Քեռիս ու քեռակինս եկան մեր տուն): Է.Աղայանը ևս *հասի* բառահոդվածում հղում է անում *ազի* բառին՝ *մայր* իմաստով[28]:

Յրտանալ: Բարբառային հայերենի կարևոր առանձնահատկություններից է տարբեր խոսքի մասերից բայեր կազմելը, հատկապես՝ գոյականներից և ածականներից: Կոզենի բարբառում ևս առկա են այդպիսի ինքնատիպ բառեր. օրինակ՝ *ցուրտ* ածականից բառիմաստային ճյուղավորմամբ ձևավորվել է *ցրտանալ* բառը՝ «մրսել» իմաստով. Ցուռտ ըի, *ցրտանաս* ըիմ[29] (Ցուրտ է, մրսում եմ): Հին շրջանի հյուսիսկովկասյան փոխառություն դիտարկված *աք* (ոտք) բառից՝ *հըքըվէրվէլ*՝ «քայլել սկսել, գործ ձեռնարկել», նաև՝ *հաքավըրվէլ*՝ «պատրաստվել ինչ -որ բան անելու»[30]: *Գլուխ* գոյականից բաղադրված է *գըլխէլ* բայը՝ «վերջանալ» իմաստով: Մեր բարբառախոսներից գրանցել ենք հետևյալ օրինակները՝ Ձըմէռնա տօլինքըն ուժէ *գըլխած ըի* (Ձմեռվա ուտելիքը արդեն պրծել է): Տան

---

[26] **А. Асмангулян**, *История армянских терминов родства*, Е., 1983, с. 42-47:

[27] **Հ. Խաչատրյան**, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 32-33:

[28] **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան,* Ե., 1976, էջ 829:

[29] Լեզվի ինստիտուտի արխիվ, «472. Կոզեն» տետրում:

[30] **Խաչատրյան Հ.**, *Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ*, էջ 18:

հացը *գըլխած ը̆ի*: Մըէր բախչէյի պամադուրը, խըյարը, մըշմըշի̈կը *գըլխած ը̆ի* (Մեր այգու լոլիկը, վարունգը, ծիրանը) վերջացել է):

Պարանվէլ: Պարան բառից է առաջացել *պարանվէլ*-ը՝ «պառկել» իմաստով: Հին մատենագրությունից ավանդված *պարանվէլ* բայը՝ «դառնալ, յետ դառնալ» իմաստով, առկա է նաև Կոզենի բարբառում: Այն կազմված է *պար* «շուրջ» արմատից և *-ան* ածանցից. Հ. Աճառյանը փաստում է նաև բարբառներում գործածվող *պարանել* բառը՝ «դարձնել, շուռ տալ, մյուս կողմը դարձնել, տապալել», *պարանվիլ* «դառնալ, շուռ գալ» իմաստներով[31]: Կոզենի բարբառում բառիմաստային ճյուղավորմամբ բառը ստացել է «պառկել» իմաստը: Բացի *պարամվել* ձևից բարբառում գործածվում են նաև *պարան ընգլի̈նէլ*՝ «պառկել», ինչպես նաև *պարան տալ*՝ «շրջել, փլցնել» նշանակություններով հարադրավոր բարդությունները[32]. օրինակ՝ Սըրկի չի̈ստ ըմ *պարամված* (Այսօր շուտ եմ պառկել): Քըշէր-ցէրէկ կըռավաթին *պարամված* ին նիլի (Գիշեր-ցերեկ մահճակալին պառկած է): Քամ ը̆ի վախտը ծառ ը̆էրը *պարան ըն ընգլած* (Քամու ժամանակ ծառերը շուռ են եկել): Բարխան ը̆էն *պարան տալի* վախտն ը̆ի (Անկողինը շուռ տալու ժամանակն է):

Բառիմաստի նեղացումն ու մասնավորումը իմաստափոխական այն երևույթներն են, երբ բառը ձեռք է բերում ավելի նեղ, մասնավորված իմաստ կամ իմաստներ: Այս դեպքում բառերը իմաստային զգալի տեղաշարժեր են կրում: Բառը կորցնում է նախնական ավելի լայն իմաստը և ստանում նեղ, մասնավոր իմաստ: Կոզենի բարբառում բառիմաստի նեղացման ուշագրավ օրինակ է *կրծու*-ն

[31] ՀԱԲ, հ. Դ, էջ 56:

[32] Հմմտ.՝ Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 902-903:

(Ռ. Բաղրամյանը արձանագրել է նաև *կուծի, կուծու* տարբերակներով[33]): *Կըծու* ածականը բարբառում դրսևորվում է որպես *սոխ* հասկացության նշանակելի: *Կծու սոխ* բառակապակցության *կծու* հատկանիշը փոխանվանաբար ստացել է *սոխ* նշանակությունը. օրինակ՝ *Կըծույէն* աչկէրըս մըխկիտ-մըխկիտ ըրէդ (Սոխից աչքերս մրմռացին): Յէղըձո՛ւն կանանչ *կըծույօվ* համօվ ըի (Ձվածեղը կանաչ սոխով համով է): *Կըծույի* արխըմը շատ ալա կըէր (Սոխի մարգում շատ մոլախոտ կար): Իսկ կծու պղպեղին պարզապես *տաքտեղ* են ասում:

Եզրակացություն

Այսպիսով՝ քննելով Կոզենի բարբառի բազմաշերտ և յուրահատուկ բառապաշարի հետաքրքրական իրողությունները՝ դարձյալ համոզվում ենք, որ կոզենցիները ուտիների հետ ոչ մի առնչություն չունեն: Այս բարբառում առկա են բառային հնաբանություններ, գործածվում են նաև հին փոխառություններ, կենսունակ են բառիմատային ճյուղավորմամբ ձևավորված յուրօրինակ բառեր, ինչպես նաև բառակերտման յուրահատուկ ձևեր:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., 1967:
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Բ, Գ, Դ, Ե., 1973, 1977, 1979:
Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:
Բաղրամյան Ռ., Կոզենի բարբառը, Ե., 1961:

[33] **Ռ. Բաղրամյան**, *Կոզենի բարբառը,* Ե., 1961, էջ 211:

Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե.,1964:
Բարխուտարեանց Մ., Արցախ, Բազու, 1895:
Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:
Լեզվի ինստիտուտի արխիվ, տետր «472. Կոզեն»:
Խաչատրյան Հ., Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009:
Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Ե., 2004:
Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Զ, Ե., 2010:
Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանություններ, Ե., 2024:
Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Ե., 2001:
Նոր Դար, 1886, հ. 119:
Զահուկյանական ընթերցումներ, 1(22), Ե., 2025:
Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
Սարգսյան Ա. Յ., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:
Ե., Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ս.Քամալյանի ֆ., ց. 2. բ. 6-րդ, գ 62, թ. 13-14:
Асмангулян А., История армянских терминов родства, Е., 1983:

Khachatryan Hasmik. A Number of Facts of the Vocabulary of the Krzen Dialect.- This article examines a number of interesting facts of the multilayered and unique vocabulary of the Krzen dialect, which once again come to prove that the Krzen people have no relation to the Uti people. In this dialect, there are lexical archaisms that go back thousands of years (spine - ser, maternal uncle's wife - azi>hæsik). The Krzen dialect also uses old loanwords (pinkie>tsitsik mat, diet - pahrez). Unique words formed by semantic branching are common here (onion>spicy, fish>tapəik, grandmother>metzəik), azi>hæsik from the meaning of mother - kerakin (maternal uncle's wife), as well as unique forms of word formation (to catch cold -

tsərtanal, to go to bed - from the word rope [paran]- paranvel, walk - from the old borrowing of the word leg [ak]- həkəvervel, scorpion - having a hooked tail - kerəhakyi).

Keywords: Karabakh-Shamakhi Interdialect, Phonetic Change, Native Armenian Word, Borrowing, Semantic Branching, Grabar (Old Armenian).

Khachatryan Hasmik, PhD in Philology, H. Acharian Institute of Language RA MESCS, Researcher.

Хачатрян Асмик. Ряд фактов из лексики крзенского диалекта. -В этой статье рассматривается ряд интересных реалий многослойной и уникальной лексики крзенского диалекта, которые еще раз доказывают, что крзенцы не имеют никакого отношения к утикцам. В этом диалекте встречаются архаизмы, происхождение которых уходит в глубь тысячелетий (позвоночник: sern, жена дяди: azi > hasik). В диалекте Крзена используются также древние заимствованные слова (мизинец > t͡sit͡sik mat, питание, диета > pahrez). Здесь продуктивны уникальные словоформы, образованные путем семантического ответвления (лук > kt͡su (острый), рыба > тапəик, бабушка > мецəик, ази > hasik от смысла слова "мать" - керакин, а также уникальные формы словообразования: -мрсел (мёрзнуть) - цртанал, паркел (лечь, лежать) - от слова паран (веревка) - паранвел, кайлел (ходить) - от старого заимствования слова "ɑkʰ" (нога) - həкəвервел/ходить, скорпион - имеющий крючковатый хвост - кəрəнакьи).

Ключевые слова: Карабахско-Шамахский междиалект, чередование звуков, исконное армянское слово, заимствование, семантическое разветвление, грабар.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна МОНКС РА, научный сотрудник.